



ԲԱԴՄԱՎԵՊ

ՈՅԺԸ. 1869 — ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵԹՈՒՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ. — ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՆՇՄԱՐԻ ԵԽ ՆՇԽԱՐԻ

Ի Հայաստան Աշխարհի.

(Տես Երես 321)

Կարս՝ կարնոյ, և անով բոլոր Փոքր Ասիոյ՝ պատուար և դուռ կը ընայ ըսուիլ Օսմանեանց արևելեան հիւսիսային սահմաններուն . ամրութեամբ հիմայ առաջին քաղաք է իրենց վիճակած Հայաստանին . և մեր հին աշխարհին մէջ ամենէն առողջ և ուժով մնացեալ տեղն կը ընայ ըսուիլ . միանդամայն և մէկ հատիկ ողջ մնացած Հայոց թագաւորանիստ քաղաքաց մէջ, որոց շատն բոլորովին աւերակ են, ոմանք կիսաւերակ, կամ անշուկ գիւղ մը դարձած : Քաղաքական վարչութեամբ և առևտրի կողմանէ ալ մեր աշխարհին գոնէ երկրորդ կարգի քաղաքաց մէջ նախադասներէն է . Վրաստանի և Ռուսաց բաժնին մօտ ըլլալով՝ աւելի շատ զանազան աղջաց կերպարանք կ'երևան 'ի կարս քան 'ի կարին . կովկասային ժողովրդոց դրացի և իջևան եղած է շատ

դարերէ վեր, Պարսկաստանի վաճառականաց ալ գործակից : Միով բանիւ՝ շատ կերպ տեսութեամբք, թէ բնական, թէ քաղաքական, թէ պատերազմական, թէ հայրենական, մեր աշխարհին ամենէն նշանաւոր շինից մէկն է կարս, արքայաշուկ քաղաքն վանանդայ :

ԻԲ. Այս գաւառիս շէն և անշէն գեղերէն շուտով անցայ՝ Շիրակայ հոչակաւոր շէն ու անշէնը դիտելու փափագելով . բայց նախ հոս փափագելով փնտուեցի և չգտայ այն իշեցանից գիշողն վանանդայ, որ արժանի էր ամենայն հայրենասէր Հայ մարդու ուխտատեղի մ'ըլլալու . վասն զի հայրենիք է զքանչելի և աննման անձի մը, յորում մեծապէս միացեալ էին սրբութիւն, դիտութիւն, խոհեմութիւն, արիութիւն և հայրենասիրութիւն, և որ դժուարադոյն դարու և դիպայ մէջ մեր աշխար-

հին եկեղեցական և զինուորական դասուն միանդամայն հոգի և առաջնորդ եղաւ . այն է Երեցն Ղետոնդ . որ թէ և սոսկ քահանայ մ'էր՝ բայց եպիսկոպոսը և կաթողիկոսն ալ իրեն խորհրդով և հոգւով կը շարժէին . անոր համար իրենց նահատակակից խումբն ալ ասոր անուամբ Ղետոնդեանք կը կոչուի , և վարդանանց զուգակից կը հռչակուի և կը տօնուի յեկեղեցւոյ և 'ի հայրենեաց : Հիմայ այս կողմերս իջևանից անունը չսերով՝ կարծեցի որ Ղարսայ մէկ վիճակին զիխաւոր աւանն՝ որ կէջվան կը կոչուի 'ի թուրքաց՝ նոյն իմ փնտուածս ըլլայ . սակայն ճամբաս հոս չդարձաւ , որ ծերունեաց հարցընեմ՝ կարծիքս ուղղելու . կը յանձնեմ իմ հետևողացս՝ այս գերագոյն հայրենասիրին հայրենիքը յերեան հանելու :

ԻԳ. Օսմաննեան Հայաստանի ամրագոյն քաղաքէն հեռանալով դէպ յարեւելք՝ քանի մը գեղերէ անցայ , ինչպէս Գալֆա-օղլի , ուր մեծ ջրի աւազան մը կայ , Մշկու , և այլն . և քիչ մը բլրածն բարձրացեալ զիքեր անցնելով , իմացայ որ հիմայ Շիրակ դաշտին և գաւառին մէջն եմ եղեր : Հայաստանի 200 կամ ըստ ոմանց 620 գաւառաց մէջ դուցէ հազիւ երկու կամ երեք հատ գտուին հաւասար կամ մօտիկ Շիրակայ՝ աղգային յիշատակօք լի՝ կամ թէ յիշատակաց վկաներովը , որք են հիմայ կանգուն , կիսականգուն , աւեր և կիսաւեր և բնաւեր չէնք : Դեռ շատ չէն և ամայի գեղերու քով՝ անոնց ծեր պահապանի պէս կայնած կամ հանգչած են եկեղեցիք , տաճարք , մատրունք , քառակուսի բոլորակ գմբեթաւոր սաքաշէն . քիչերն գեռ յերկինք կը բարձրացընեն իրենց բազմադարեան ձիւներէ բուքերէ անցած զլուխները , շատերն՝ իրենց ամուր և հաստահիմն կողերուն վրայ միայն կոթընած՝ կարծեսթէ մահուան և անմահութեան կոիւ կ'ընեն ժամանակին գէմ , ոմանք ինչուան 1300 տարիէ վեր : Իրաւ շատ ընդարձակ է Շիրակայ դաշտն , հարաւէն մինչև յերասի գետ , արեելքէն մինչև յԱրա-

դած լեռ տարածուած , սակայն կ'երսի թէ դեռ երբեմն իրեն շէնքերուն համար նեղ եղած է : Այնքան բազմաթիւ են եղեր բնակիչքն . այս ալ նախապէս իր բազմաբերութեանն համար , որով հոչակուած է 4000 տարիէ վեր : Վասն զի ըստ աւանդութեանն նախնեաց մերոց , Հայկայ թոռնորդին Շարա՝ թէ շատակեր և թէ շատզաւակ՝ ասկէ յարմար երկիր մը չգտաւ իրեն բնակութեան . որ թէ և բարձրութեանն համար ցուրտ և սակաւապտուղ է , բայց առատ և ընտիր ցորեն մ'ունի , որ երկին բոլոր բնակիչքը մնուցանելէն զատ՝ կը բաւէ շատերու ալ : Ամենուն յայտնի է մեր հին Հայկազանց ատենէն կըր կնուած առակն՝ շատակեր հիւրերու համար , « թէ քո՝ Շարայի որկորն է , մեր՝ Շիրակայ ամբարքն չեն » :

Շիրակայ չորս կողմը նայած ատենդ՝ բնութեան մէկ հսկայն մէկէն դիմացդ կը կանգնի ահեղ կերպարանօք և մեծութեամբ , — Արագած լեռն . — որ Հայաստանի չափեալ լերանց մէջ բարձրագոյնն է յետ Մասեաց , 12,600' . և գուցէ քան զՄասիս լայնագոյն , ընդարձակ կողերով և ստորոտիւք . ուսկից շատ առուակներ կ'իջնան կ'երթան դէպ ՚ի հիւսիս յԱրարատեան դաշտագաւառը . լերան զլուխն ալ ճղբըստած՝ բրդածն ապառաժներովը կ'իմացընէ թէ որչափ աշխատանք տուեր է երկրին , անոր ծոցէն զուրս ենելու , և որչափ աշխատանք կը եր է իր ծոցի հրաբուղ խէն , որ՝ ոգիտէ՝ քանի դարեր բորբոքելով որոտարով բոցեղէն հեղեղներ փսխելով՝ իր երիտասարդութիւնը անցուցեր է , և հիմայ ծերացեալ և դադարեալ , ծծմբածոր արտսունքով կուլայ իր անցեալ եռանգուն հասակը : Երբեմն վառ և յետոյ մարած լապտերի մը պէս միշտ կանգուն կեցած բազմաբիւր մարդկան ցեղից դիտարան եղած , և հիմայ լուռ վկայ մ'է :

Շարայի անուամբ (որ ստուգիւ պէտք էր Շիրա ըլլալ) Շիրակ ըսուած , և անոր սերնդեամիք բնակուած , այս զաւառս՝ Այրարատայ մօտ և դրացի , ան-

շուշտ անոր ալ վիճակակից՝ արքունական ազնուական երկիր մ'էր. անոր համար հին դարուց մէջ չեն յիշուիր Շիրակացիք՝ իրրև առանձին նահապետութիւն կամ տոհմ մը. Դ դարուն սկիզբները՝ մեծն Տրդատ, երբ իր և Լուսաւորչի արշակունի ցեղին մէկ պայազատն՝ կարէնեան կամսարն՝ փախչելով սասանեանց թագաւորէն իրեն ապաւինեցաւ, տուաւ անոր այս գաւառս 'ի ժառանգութիւն. և յետ անոր մահուան՝ որդւոյն Արշաւրայ պարգևեց ոչ միոյն երկիրը, այլ և անոր մէջ ցեղատէր կամ նահապետ մ'անուանիլն, կոչելով զայն կամսարական. բայց աւելի ևս անոր անուամբն Արշարունիք (և ռամկաբար Աշորինիք) ըսուեցաւ երկիրն. սակայն հին անունն ալ պահուելով ել-է դարուց մէջ անոր տեարքն կ'ըսուէին Տէր Շիրակայ և Արշարունեաց, իսկ աղջաւ՝ կամսարական կամ Արշարունի կոչուէին: 400 տարւոյ չափ Հայոց իշխանաց կամ նախարարաց մէջ ամենէն պատուաւոր և բարձրագահներէն էին Շիրակայ տեարքն, վասն զի Արշակունեաց կամ թագաւորաց ցեղակիցք կը ճանչուէին. և երբ թագաւորութիւն և քահանայապետութիւն վերցուեցաւ 'ի Պահլաւունեաց, այս ցեղս իրրև անոնց շարունակութիւն մը աւելի պատուեցաւ: Յայտնի են 'ի պատմութեան զործք Արշաւրի, քաջին Սպանդարատի և իր քաջ որդւոյն Գաղատոնի, վարդանայ փեսայ և սիրելի Արշաւրի, անոր որդւոյը Ներսէհի և Հրահատայ՝ սրտակից և նիղակակից բարեկամացն վահանայ Մամիկոնէի, որոց քաջութիւնն և իրարու վրայ ունեցած սէրն՝ անմահանալի յիշատակ թողուցին: Ասոնց պայազատքն մեծ պատիւ գտան 'ի կայսերաց Յունաց, պատրիկ և ապիհիւրպատ կոչուելով, և երբեմն բոլոր յունական Հայաստանի վերատեսուչ կամ կողմնակալ կարգեցան, ինչպէս իրենց նախնին Գաղատոնն ալ փոխանակ թագաւորի զրուեր էր կումն պատուանուամբ, երբ արեւելեան մասին վրայ դեռ Հայոց չուփն և վառքն. և յետագայ դարուց դէպքն և պատերազմներն թուրքից, թագաւորից կային: Մինչև լ

դարու սկիզբները կը յիշուին կամսարական տեարք Շիրակայ. որոց մէջ յետին երեսլի եղողն է Ներսէս ապիհիւրպատ պատրիկ՝ անուանի քաջութեամբ, խոհեմութեամբ և բարեպաշտութեամբ, որուն ընծայեց Գրիգոր Արշարունեաց քորեպիսկոպոսն անոր խնդրանք զրած Ընթերցուածոց մեկնութիւնը: Ասոր դուստրն Շուշան յամի 705 վկայական մահուամբ կատարեցաւ ամիրապետաց արքունիքը, տարիմ' առաջ գերի քշուած ըլլալով հոն, Արաբացւոց կրակէն ազատած աղնուականաց որդւոց հետ. իր եղբայրն Գագիկ նոր եկեղեցի մը շիներ և նաւակատիքը կատարելու վրայ էր, երբ լսեց քրոջը վախճանը՝ երկու յիշատակը մէկտեղ կատարեց: Բ դարուն վերջերը՝ Բագրատունի իշխանք զնեցին 'ի կամսարականաց Շիրակայ և Արշարունեաց երկիրները. (վասն զի առանձին գաւառ մը սեպուեցաւ Արշարունիք, որ Երասխայ նեղուածք եղերքներուն վրայ տարածուած ըլլալուն համար՝ Երասխանալոր ալ կ'ըսուի): Բագրատունիք աւելի չենցուցին գՇիրակ, իրենց ոստանը, այսինքն իշխանանիստընակարանը փոխադրելով հոս, և հաստատելով 'ի Շիրակաւան կամ յիշագգաւորս, և յետոյ յԱնի բերդաբաղազք, որ Ժ դարուն մէջ ոչ միայն Շիրակայ՝ այլ և բոլոր Հայաստանի առաջին քաղաքն եղաւ, նոյնպէս ալ մնաց քիչ շատ փառք ԺԱ-ԺԳ դարուց մէջ. բայց 'ի կէս ԺԱ դարու բուն Բագրատունեաց և Հայոց ձեռքէն ելաւ, վաճառուելով Յունաց. յորոց քիչ ատենէն խլեցին Թուրք Սէլուկեանք, և Շէտտատեան տոհմի մը յանձնեցին. ասոնց մէ յափշտակեցին Վիլզը և իւանէի. ասոնց որդւոց կալուածք էր Անի, երբ ակրեցին Թաթարք. իսկ ասոնց տիրապետութեատեն ԺԴ դարուն մէջ նուազեցան, աւրուեցան վերցուեցան թէ Անիի և թէ բոլոր Շիրակայ շուփն և վառքն. և յետագայ դարուց դէպքն և պատերազմներն թուրքից, թագաւորաց, Պարսից,

Թուղթաց և Ռուսաց մինչև 'ի մեր օ-
րերս , նոյն աւելքը շարունակեցին ,
միայն քանի մը շինութեամբք միսիթա-
րելով այնքան անմիտար աւերածնե-
րը , որք մեծ մասամբ մ'ալ անհետ ան-
նիշ կ'ըլլան : ...

Վասն զի ինչպէս վանանդայ՝ այս-
պէս ալ Շիրակայ մէջ շատ անգամպա-
տերազմն իր արհաւելքը սփռած է . և
դեռ վերջին Ղրիմու ըսուած պատե-
րազմաց տարիները՝ հոս ալ կատարուե-
ցան այն արիւնալից գործերը , զոր՝
ստէպ պատահելուն համար՝ իբրև սո-
վորութիւն եղած է առանց ամրշնալու
պատմել . սակայն գոնէ ժամանակակից
մը պէտք չէ առանց ցաւոց յիշէ . իսկ
ականատես մը այն պատերազմի դաշ-
տերուն , եթէ սիրտ ունի՝ չիկընար ա-
ռանց սոսկման և բոլորովին ցամաք աշ-
քով նայելու անոնց վրայ , մինչդեռ
ինքնին քանի մը պժգալի նշանք հոն ե-
ղած մարդակոտորութեան՝ կը պահան-
ջեն այս գթոյ հարկը : Եւ ահա այսպիսի
տեսարան մը բացուեցաւ ինձի Շիրակայ
առաջին սահմանաց վրայ . Քիշրէկ-տէրէ
գեղէն անցնելուս ատեն , ուր 1854ին
օգոստոս ամսուն վեցին գրեթէ 80,000
դինուր մարդիկ , կէս թուրք կէս Ռուսք ,
իրարու դէմ ճակատեցան , կոռուեցան ,
զարկին ընկան . և յաղթող սեպուեցան
Ռուսք , որոց մեծ զօրապետն էր Հայ-
ազգին Բեհրուդով . որ յետ 666 ա-
մաց՝ Զաքարէի և իւանէի յաղթանակ-
ները արթընցընել կարծուեցաւ : Գու-
ցէ ընթերցողքս յիշեն դեռ նոյն օրերը
լրազրաց պարագուխ լոնտոնի Դայմզ
լրազրին մէջ կարդացածնին . անոր
թղթակցաց մէկն կամաւ եկեր էր տես-
նելու և տեղեկութիւն տալու դիպուած-
ներուն . և այսպէս կը գրէր առջի իրի-
կուրնէ . « Հանգարտ գիշեր մ'էր , եր-
կրնքին երեսը ամպ չկար . լուսինն պայ-
ծառ ու հեղասահ , Սալլատոր Ռողացին
նկարներէն մէկուն նման : Սահմանին
մէկալ կողմը թուրքաց ճերմակ ու կա-
նաչ վրաններուն երկայն և լայնասփիւռ
շարից միջէն կ'երևացին հոս հոն զա-
տուած դալարաբոյս բլրակներ դէպ 'ի

կարսի դաշտակողմը , որոց մէկուն ստո-
րոտը կ'երևայ Յամանեան բանակին մէկ
մասն : Ա՛լ աւելի հեռուն աղօտ աղօտ
կանգուն կ'երեւան կիւմրի բերդին ճեր-
մակ աշտարակներն՝ համապայծառ լուս-
նին լուառվը , իսկ անոնցմէ ալ անդին
վրաստանի ձիւնապատ լերանց խրոխտ
գագաթունքն կը բարձրանան անմիթար
երկնից պարզութեան մէջ : Ամենեին ա-
ռանց ջանալու վարպետ և գեղեցիկ նկա-
րագրութիւն մ'ընելու՝ կը ընամը ճշմար
տութեամբ ըսել , որ խիստ քիչ անգամ
տեսեր եմ ասոր նման զբանչելի լուսըն-
կայի մէջ շրջանկար տեսլարան մը , ո-
րուն խաղաղական մակերևոյթն քիչ
ատենէն վերիվար պիտի ըլլար , պիտի
մթըննար՝ պատերազմի մահասփիւռ ո-
րոտմամբ » : Յիրաւի նոյն իսկ կէս գի-
շերուն՝ Օսմանեանց սպարապետն Զա-
րիֆ փաշայ քշեց բանակը Ռուսաց վրայ ,
որ Հաձիվէլի գեղին քով բանակեր
էին . առաւօտանց յարձակեցան Օսմա-
նեանք և յաջողութեամբ ետ քշեցին
զՄոսկովս . բայց երբ ասոնք սկսան մե-
ծամեծ հրետներով ուումբ թափել՝ ետ
քաշուեցան Օսմանեանք . և թէպէտ
Խուրշիտ և Թահիր փաշայք շատ քա-
ջութեամբ դէմ կեցան և հինգ ժամ
կոռուեցան , բայց իրենց հեծելագունդն
ետ քաշուած ըլլալով բոլոր բանակն
ալ դարձաւ 'ի կարս . քանի մը հազար
մեռած և վիրաւոր թողլով , քանի մը
հազար ալ գերի . Ռուսաց կողմէն ալ
գրեթէ նոյնչափ մարդ ընկաւ . Բեհրու-
դով քիչ մը մերձակայ սահմանները այ-
րելով և աւելով յետ դարձաւ , Համար-
ձակելով , որ և է պատճառաւաւ , Ղարսայ
վրայ յարձըկելու : — Ահա այս քիչ տարի
առաջ խուվեալ դաշտերէն կ'անցնէի ,
ուր այն օր 140 որոտաթունդ հրետք
պատերազմին տագնապները կը պատ-
մէին . իսկ հիմայ միջօրէի խաղաղու-
թեան և լուութեան մէջ՝ միայն ամառ-
նային մորեխաց ճռճռալն կը լսուէր .
քանիպատիկ սրտառուչ և աղգու՝ քան
այնքան որոտմունքն և բախմունք : ...
Այս ձայներով զբաղած քանի մը ժա-
մէն հասայ Ախուրեան (Որփա-չայ) գե-

տոյն եզերքը, որ զգաշտն Շիրակայ կ'ընդմիջէ, և անով նաև սահմանաբաժին կ'ըլլայ հոս Օսմաննեանց և Ռուսաց ինքնակալութեանց: Այն շարժուն սահմանին եղերքը նատած յօնութիւն առնելու, յետ այլեայլ մտածութեանց՝ կարգն եկաւ որոշելու թէ անցնիմ արդեզք զայն, եթէ դեռ թափառիմ արդէն գտուած կողմն:

**ԿԱՄԵՒՈՐՈՒԹԻՒՆ
ԲԱՐԻՈՔ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ
(Տես Երես 333)**

Մրրկի սպառնալիք:

Այն ծածուկ գժտութիւնը՝ որ քահանային և վարժապետին մէջ ծագեցաւ՝ սեղանին վրայ հետզհետէ զգալի ըլլալով, մեր իշխանին սիրտը կը խոռվէր և համեղ կերակուրներ ուտելու ախորժակ չունենալով՝ զորոնք առատ դիմացը կը շարէին, աւելի ևս կը նեղուէր. վասն զի զինուորական կը թութիւնը իրեն ուսուցած էր ամեն փափկութիւն և զեղխութիւն արհամահել: Աշխարհիս ամեն բաներուն պէս այս սեղանին վախճանն ալ հասաւ, հակառակ ճշմարտութեանս, թէ Մարդ չապրիր որ ուտէ՝ այլ կ'ուտէ որ ապրի: Վասն զի տանուտէր չափազանց ուտելով հանդերձ դարձեալ ուտելեաց վրայ կը մըտածէր ու կ'ըսէր հիւրերուն.

— Տեսաք իմ, ազգատ սեղանին վերջը եկաւ. հիմա կը մնայ երթալ ապակեփակ յերմանոցին քովի սենեակը անուշեղէն ու սուրճ առնելու. ուստի խնդրեմ հետս վար գայիք:

Թէպէտ և հիւր իշխանը ու քահանայն հրաժարեցան այս երկըորդ կոչունքէս, սակայն հմրկ եղաւ տանտիրոջ անուշ թախանձանացը զիջանիլ: Երբ ամենքն ալ հասան պարտիզին մէջ տաճկական ոճով զարդարած մեծ ամարանոցը, նախ բոլոր տղայք անուշե-

ղէններէն իրենց բաժինը առնելով՝ պատուէր ընդունեցան զուրս ելլալ և զանազան խաղերով՝ զուարձանալ: Տղոց երթալէն ետքը սենեկապանը տիրոջը ծխելու երկայն եղէգ մը տալով՝ ականջէն վար բան մը զուրցեց:

— Ո՛հ, ինչուան ե՞րբ պէտք է կրել այս շարունակ ձանձրութիւնը, կանչեց տանտէրը. յետոյ վարժապետին դառնալով ըստ. կալուածոց վրայի ծառայն՝ զոր այսօր արձըկեցի, հիմա եկեր է ինձմէ բարի վկայական ուղելու, իր ըրածշարութիւնը մոռցած. թէպէտ չաժէր որ այն ապիրատին համար մարդ գրիչը ձեռքն առնու, սակայն ես չեմ ուղեր անոր վասար. գնա, յարգոյ վարժապետ, կարգաւորեալ վկայական մը գրէ և վրան իմ կնիքս զարկ, փոյթ տանելով իսկոյն դռնէն զուրս հանելու զանիկայ: Ետքը հիւրերուն. Մտածեցէք մէյ մը, կ'ըսէր, թէ այս ամբարիշտ մարդը ինչպիսի յանդզնութեան ձեռք զարկաւ. նախ անցեալ ձմեռ անտառէս վառելու փայտ գողնալով իմ յատուկ սայլվս ու ձիերովս՝ չար գողակցին տունը կը տանէր որ յետոյ ծախեն. վերջապէս այս գողութիւնը յայտնի եղաւ. բայց ինքը բոլորովին կ'ուրանար. հարի զինքը ձիու խարազանաւ և այնու սիրտս հանդշելով ներեցի ըրածին, շատ աշխատասէր ըլլալուն համար. ետքը ապերախտ ծառայն փոխանակ չնորհակալ ըլլալու ինծի և հաւատարիմ մնալու, սկսաւ ծախել դաշտերուս չոր խոտը, և այն ալ շատ քանակաւ: Բայց վերջապէս համբերութիւնս հատնելով՝ երէկ զինքը լաւ մը յանդիմանեցի և ծառայութենէս ալ հանեցի. ուստի կարծեմ որ ասոր համար զիս մեղադրող չիգտուիր:

— Ես առաջին անգամ այն չարագործը տնէս զուրս կը վարէի, ըստ մեր իշխանը. վասն զի մէկ ծառային անհաւատարմութենէն չար օրինակ առնելով յաճախ ուրիշ ծառայք ալ կ'աւրուին:

— Իմ միտքս ալ սյն էր, պատասխանեց տանտէրը, և հանելով ոսկի մատանին՝ իր կնիքը՝ տուաւ վարժապետին,